



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքիհրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2022թ.

ՀՀ տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանին

Ի կատարումն Ձեր 04.08.2022թ. թիվ 02/12.15/25567-2022 հանձնարարականի  
Հարգելի Պարոն Սանոսյան  
Հայտնում եմ, որ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-029-0144-0076 կադաստրային ծածկագրով, 0.18737 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը օտարված չէ և հանդիսանում է համայնքային սեփականություն:

2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-029-0144-0075 կադաստրային ծածկագրով 0,09915 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը ինքնակամ շինությունները օրինականացնելու նպատակով փոփոխվել է հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 01.03.2022թ. թիվ 20 դրական եզրակացությամբ և ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 15.04.2022թ. թիվ 14 որոշմամբ: Հողամասում գտնվող ինքնակամ շինությունները օրինականացվել են համայնքի ղեկավարի 18.04.2022թ. թիվ 187 որոշմամբ և հողամասի հետ միասին ուղղակի վաճառքով օտարվել են Գյուլագարակ համայնքի ղեկավարի 22.05.2022թ. թիվ 220 որոշմամբ:

Միաժամանակ հայտնում եմ, որ համաձայն համայնքի ղեկավարի կողմից կազմված հողաշինական գործում առկա տեղեկանք հիմնավորման 2018 թվականի փետրվարին Հայանտառ ՊՈԱԿ-ից քաղաքացի Վահե Հայկի Պապոյանը վարձակալել է 0,5 հա մակերեսով անտառային հողամաս և 22.05.2018 թ. թիվ 01-12/36 գրությամբ ստացել է թվով 4 շարժական կացարան և 15 տաղավար տեղադրելու թույլտվություն: Հայանտառ ՊՈԱԿ-ի մասնագետները քաղաքացի Վահե Պապոյանին ցույց են տվել հողամասի փաստացի սահմանները և իրենց իսկ ցույց տրված սահմաններում տեղադրվել է 4 կացարան: Կացարանները տեղադրելուց հետո 2020 թվականին

Հայանտառ ՊՈԱԿ-ը տեղեկացրել է, որ տեղի է ունեցել թյուրիմացություն և վերը նշված հողակտորները Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի սեփականությունն են:

Կից ներկայացնում եմ համայնքի ղեկավարի կողմից կազմված հողաշինական գործում առկա տեղեկանքը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

05/08/2022

X 

ԱՐԱՄ ԽԱՀԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝

Ա. Խաչատրյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶ  
ԳՅՈՒՆԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

**ՏԵՂԵԿԱՆՔ - ՀՐԱՆԱԿՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված է թվով 4 հյուրատուն: Բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրվող 06-029-0144-0016 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,09915 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արտաավայր գործառնական նշանակության հողամասը և 06-029-0144-0017 կադաստրային ծածկագրից տարանջատված 0,09827 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արտաավայր գործառնական նշանակության հողամասը, որը չի հանդիսանում ընդհանուր օգտագործության արտաավայր ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողամասերի կազմում:

2018 թ.-ի փետրվարին Հայ անտառ ՊՈԱԿ-ից քաղաքացի Վահե Հայկի Պապոյանը վարձակալել է 0,5 հա անտառային հողամաս և 22.05.2018 թ.-ի թիվ 01-12/36 գրությանը ստացել է թույլտվություն տեղադրելու թվով 4 շարժական կացարան և 15 տաղավար, Հայ անտառ ՊՈԱԿ-ի կողմից եկած մասնագետները փաստացի ցույց են տվել քաղաքացի Վահե Պապոյանին հողամասի սահմանները և իրենց իսկ ցույց տրված սահմաններում տեղադրվել է 4 կացարան: Կացարանները տեղադրվելուց հետո 2020թ.-ին Հայ անտառ ՊՈԱԿ-ը տեղեկացրեց որ տեղի է ունեցել թյուրիմացություն և վերը նշված հողակտորները Հայ անտառ ՊՈԱԿ-ինը չէ այլ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի սեփականությունն է:

Հողամասը Մ-3 միջպետական նշանակության ընդհանուր օգտագործման ճանապարհից գտնվում է 3,9 կմ հեռավորության վրա: Հողամասի ելքը և մուտքը ապահովվելու է դաշտամիջյան ճանապարհով:

Հողամասում զրոյություն չունի և հետագայում չի նախատեսվում անցկացնել զազատարներ, ջրատարներ և էլեկտրահաղորդման գծեր, որը ստուգվել է ինչպես մեր այնպես էլ «Գազպրոմ արմենիա» ՓԲԸ-ի, «ՎԵՆԵՐԱ ՋՈՒՐ» (ՓԲԸ)-ի, «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ «Դեբեր» մասնաճյուղի, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «Լոռի» ՋՕԸ-ի կողմից: Չի հայտնաբերված նաև պատմամշակութային հուշարձաններ և պատմական միջավայր, ինչպես նաև չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք:

Տարածքում չկան սանիտարապաշտպանիչ գոտիներ ունեցող օբյեկտներ և ինժեներական ենթակառուցվածքների օբյեկտներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՊՐԵՏՈՆԱԿԱՍԱՐ՝

